



Doi: 10.56737/2953-7843-2025.06-131

ՄԵԶ ՆՎԱԶ ԾԱՆՈԹ, ԱՇԽԱՐԻՆ ՔԱՉԱՅԱՅՏ (ԱՆԴՐԱԴԱՐՁ «ԶՄՐՈՒԽՏԱՎԱՌ ԱՍՊԵՏԸ» ՎԵՊԻՆ)¹

Տրանսահայ մեծահռչակ գործիչ եւ գրող Վիկտոր Գարգոնը՝ Վահրամ Կաքավյանը, ծագումով Վանից է: Եղեռնից փրկվելով՝ նա ապրել ու ստեղծագործել է Ֆրանսիայում: Իր «Զմրուխտավառ ասպետը» վեպն ականատեսի վկայությունն է Վանում տեղի ունեցած ջարդերի, հալածանքներից դառնացած ժողովրդի ինքնապաշտպանության, թուրքական կազմակերպված գործի դեմ վճռական պայքարի մասին:

Հոգվածում փորձել ենք վեպի հիման վրա դիտարկել թուրքերի հաշտահալած ու զավթողական քաղաքականության դրվագները: Արտաքուստ բարեկամ ձեւացող, բայց իրականում գիշատիչ թուրքին հակադրված են հայերի կերպարները՝ միամիտ ու դյուրահավատ, աշխատասեր, արարող, խաղաղության ձգտող: Հատկապես ընդգծվում է հայ կանանց զգոնությունը, թուրքին խորապես ճանաչելու եւ շրջահայաց լինելու հանգամանքը:

Մեր տեսանկյունից նյութն արդիական է եւ միտված է հիշեցնելու թուրքի իրական կերպարն ու սթափեցնելու «խաղաղության» կեղծ օրակարգի ձգտող մերօրյա հայերին:

Վիկտոր Գարգոնը՝ Վահրամ Կաքավյանը, հայ ընթերցողին, ցավոք, այնքան էլ ծանոթ չէ, մինչդեռ նրա «Զմրուխտավառ ասպետը» վեպն այսօր հույժ օգտակար կլինի յուրաքանչյուր հայ ընթերցողի՝ թուրքի կերպարին ու քաղաքականությանը քաջատեղյակ լինելու, մերօրյա հայերի գլխին կախված վտանգը գնահատելու ու դրան դիմակայելու գործում: Թուրքի հետ «խաղաղության» ձգտողներին սթափեցնելու եւ նրանց

¹* Ստացվել է՝ 25.04.2025, գրախոսվել է՝ 25.05.2025: Էլ. հասցե՝ santryan83@mail.ru:

հիշողությունը թարմացնելու հրամայականը հոգվածի առաջնային նպատակներից է:

* * *

Վահրամ Կաքավյանը ծնվել է 1903 թ. Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի Տոսպ գավառի Վան քաղաքում՝ Այգեստան թաղամասում: Հայրն ազգային առաջին քաղաքական կուսակցության՝ «Արմենականների» հիմնադիրներից էր, այս իսկ պատճառով կուսակցական խորհուրդներն ու ժողովները հաճախ տեղի էին ունենում ապագա գրողի հայրական տանը: Ու չնայած ավագները դեմ էին, պատանի Վահրամը միշտ ներկա էր լինում բոլոր հավաքներին:

Նա 1915 թ. ականատես եղավ Վան-Վասպուրականի ինքնապաշտպանական մարտերին: Արդեն տարածաշրջանից ռուսական զորքերի հեռանալուց հետո ստիպված էր հաստատվել Թիֆլիսում, ուր ընդունվելով Ներսիսյան դպրոց՝ ընկերակցեց Անաստաս Միկոյանին եւ շատ ալոց, որ ապագայում մեծ բարձունքների պիտի հասնեին: 1917 թ. Վահրամն անցնում է Ռոստով, իսկ 1920 թ.՝ Կոստանդնուպոլիս, ընդունվում Կեդրոնական վարժարան:

Քիչ անց՝ 1923-ին, Վահրամը լքում է Թուրքիան եւ հասնում Ֆրանսիա, գրանցվում Սորբոնի համալսարանում, իսկ ավելի ուշ՝ նաեւ ճարտարագիտական կրթություն ստանում: Ամուսնանալով ֆրանսիացի ուսուցչուհի էլենայի հետ Կաքավյանը երկու զավակ ունեցավ, բայց եւ մինչեւ կյանքի վերջ փարված մնաց եւ սերտ կապեր պահեց հայ համայնքի հետ:

1939 թ., ինչպես «Նանսենի անձնագիր»² ունեցող հայ երիտասարդների մեծագույն մասը, Վահրամ Կաքավյանը եւս զորակոչվեց ֆրանսիական բանակ: Ահեղ մարտերից մեկի ժամանակ նա Գերեվարվեց եւ գերմանական ճիրաններից ազատվեց միայն փախուստի երրորդ փորձի արդյունքում: Դրանից հետո, 1942-ին, միացավ Դիմադրության շարժմանը, անդամագրվելով պրոֆեսոր Կավայեսի խմբին՝ ընդունեց Վիկտոր Գարդոն ծածկանունը: Մասնակցել է բազում գործողությունների, ֆրանսիա-

² Պալմանականորեն՝ նորվեգացի բեռնախույզ, գիտնական եւ մեծ մարդասեր Ֆրիտյոֆ Նանսենի անունով էին կոչում անձը հաստատող փաստաթուղթը, որ 1922-ին իր իսկ առաջարկով ստեղծել էր Ազգերի լիգան՝ հայրենազուրկ եւ փախստական անձանց (հատկապես՝ հայ, հույն, ասորի) օժանդակելու նպատակով. տես <https://www.atlasobscura.com/articles/nansen-passport-refugees>:

կան բանակում հասել հրամանատարի կոչման, իսկ եւ 1947 թ. մարտական բառիկ ծառայությունների համար արժանացել «Պատվո լեգեոն» շքանշանի³:

Ֆրանսիայի ազատագրումից հետո Կաքաւեանները հաստատվեցին Բոնյոյ-սյուր-Մարնում (Վալ-դը-Մարն), ուր էլենան ստանձնեց տարրական դպրոցի տնօրենի պարտականությունները, իսկ Վահրամը պաշտոնավարում էր հայտնի ընկերություններից մեկում:

Ինչպես նշվեց Վիկտոր Գարդոնը միշտ սերտ է պահել կապերը հայրենակիցների հետ, աշխույժ կերպով անդամակցել է վասպուրականցիների եւ ֆրանսահայերի միություններին, առանձնակի ջերմ շփվելով ֆրանսահայ մտավորականների՝ Աշոտ Նշանեանի, Մելոյեանի, Գառզուի, Նիկողոս Սարաֆեանի, Նուբար Արփիարեանի եւ այլոց հետ:

Կաքավյանի՝ հայերենով ստեղծված եւ հրատարակված միակ գիրքը «Պողպատ է սերմերն»⁴ է , որ լույս տեսավ 1929-ին՝ Փարիզում:

Գարդոն-Կաքավյանն իր գիտական-գրական հակումները դրսևորել է տարբեր ասպարեզներում, պարբերաբար հանդես է եկել սփյուռքահայ մամուլում, մասնավորապես՝ փարիզյան «Յառաջ» օրաթերթում՝ տարբեր առիթներից դրված «խոսելով» հայ ընթերցողի հետ: Բայց սրա հետ մեկտեղ Կաքավյանը բավականին շուտ գիտակցել է ազգի պատմությունն ու վիշտը օտար լեզվով ներկայացնելու կարեւորությունը. «Ֆրանսիացիները պետք է մեզ ճանաչեն ու տեղեկանան մեր անցյալի, մեր պատմության եւ մեր ողբերգության մասին»⁵: Այսպես ի լույս ընծայվեցին «Իմ կյանքի կանաչ արեգակը»⁶, որ թարգմանվեց նաեւ իսպաներեն⁷ ու ջերմ ընդունելության արժանացավ, «Զմրուխտե ասպետը»⁸, «Բոսորավառ յայտնութիւն»⁹ գրքերը, որոնցից յուրաքանչյուրը հայի ու հայկականության մի առաձին շունչ էր կրում:

Օրինակ՝ «Բոսորավառ յայտնութեան» մեջ տեսնում ենք, որ Եկեղեցի այցելած հերոսը՝ Վահրամը, հանդիպում է Հայոց սրբավայր ժամա-

³ Տե՛ս <http://www.acam-france.org/bibliographie/auteur.php?cle=gardon-victor>

⁴ Grains d'acier.

⁵ Il faut,— disait-il —, que les Français nous connaissent et soient informés de notre passé, de notre histoire et de notre tragédie.

⁶ Le Vert soleil de ma vie, 1959.

⁷ El verde sol de la vida, 1964.

⁸ Le Chevalier à l'émeraude, 1961.

⁹ L'Apocalypse écarlate, 1970.



նաժ Յարին ու Վեհափառ Հայրապետին եւ տուն գալով՝ ներկայացնում է իր տպավորությունները: Նրա հարազատների արձագանքը պարզորոշ ցույց է տալի ազգային հոգեւոր կառույցի եւ հայ հագեւորականի, կաթողիկոսի հանդեպ ժողովրդի բացառիկ վերաբերմունքը:

Ահա Վահրամին հարցնում են.

— Պատմէ՛, ի՞նչպէս էր ցարը:

— Շատ սիրուն, շատ ազդեցիկ, շատ տխուր եւ բոլորովին անտարբեր:

— Մօտէն տեսա՞ր:

— Շատ մօտէն, որովհետեւ հետս խօսեցաւ:

Երեք կիները տեղերնէն վեր թռան, Աղանին խաչակնքեց:

— Հապա Վեհափառ Կաթողիկոսը:

— Զեռքը բռնեցի եւ համբուրեցի:

Երեք կիները յարձակեցան Վահրամի վրայ, ձեռքն առին ու համբուրեցին, «քանի դեռ հայրապետական հպումը թարմ էր վրան...»¹⁰:

Սրանից ավելի մեծ սեր ու պատկառանք, թերեւս, դժվար է արտահայտել կարճառոտ տողերում:

Իսկ կրկին գալով մեր հիշատակած վեպերին, պետք է նկատեք, որ առաջին երկուսը արեւմտահայերեն է թարգմանել Աւետիս Եափուճեանը եւ դրանք նախ հրապարակվեցին Կահիրեի «Արեւ» օրաթերթում: Դրանցից մեկի՝ «Իմ կյանքի կանաչ արեգակը» վեպի հիման վրա Ֆրանսիայում ձայնասփիւռի ներկայացում ստեղծվեց՝ «Շամիրամի դիւթանքները»¹¹ վերտառույթամբ: Յավոք այն բեմադրելու եւ նկարահանելու նախագիծը,

¹⁰ Տե՛ս <http://jamanak.com/content/hnqn-մտաւ.նր/14-01-2022-ողորմած-յարգանքը>:

¹¹ Les Charmes de Sémiramis.

ուր արդեն որոշված էր, թե մեծ մայրիկի դերը պիտի խաղա Ֆրանսուազ Ռոզեն, չիրականացավ: Ինչպես եւ բազում այլ լուսավոր ու վառ գաղափարները, որ թեւածում էին պայծառ հայորդու մտքում:

Գարդոնը նոր էր ավարտել իր հերթական վեպը՝ «Դիմադրությունը»¹² (ձեռագիրը ցայսօր կորսված է), երբ կտրուկ վատացավ իր առողջական վիճակը եւ հիվանդանոց տեղափոխվելով՝ վախճանվեց սրտի կաթվածից: Վիկտոր Գարդոն-Վահրամ Կաքավյանը մահացավ 1973 թ. հունվարի 29-ին եւ հուղարկավորվեց Բոնյոյ-սյուր-Մարնի գերեզմանատանը: Եւ այս աշխարհից հեռացավ հայրենիքն ու քաղաքակիրթ մարդկությունն անսահման սիրող գեղագետը, որ հաճախ կրկնում էր, թե կյանքն աստվածային հրաշք է՝ լի երջանկությամբ, որ զորեղները վերածել են դժոխքի: Իր մշտական խոսքերից էր նաեւ Հայոց եղեռնի մասին ասույթը. «Եթե մարդիկ մոռացութեան մատնեն թուրքերի գործած յանցագործությունը, քարերը կաղմկեն»¹³:

* * *

«Զմրուխտավառ ասպետը» վեպը լույս է տեսել Ֆրանսերեն, արեւելահայերեն թարգմանել է Վահե Միքայելյանը¹⁴: Այն ականատեսի նկարագրությունն է Ի. դարասկզբի Վանի քաղաքական եւ ընկերային իրավիճակի, 1915 թ. ինքնապաշտպանական կռիվների¹⁵:

Իր կյանքի պատմությունն սկսելուց առաջ հեղինակը խոստանում է. «Ոչինչ չեմ փոխի ես, ոչ նույնիսկ անունները: Վերջին հաշվով սա կլինի վերարտադրանքը հիսուն տարիների պատմության, սկսած իմ Հայաստան բնաշխարհից, մի պատմություն, որ ապրել եմ տասնյակ երկրներում, արհավիրքի ու մահվան մշտական սպառնալիքի ներքո, գաղթի ու ընկճումի օրերին, ռուսական հեղափոխության փոթորիկներում, գաղտնի ծառայությունների ետնաբեմում, ուր նախապատրաստվեց 1939—1945 թվականների պատերազմը, «արտառոց պատերազմի» (այսպես են անվանում Ֆրանսիացիները 1939 թ. սեպտեմբերից մինչեւ 1940 թ. մայիսը, երբ Մաժինո եւ Զիգֆրիդ ամրացած գծերի վրա աննշան հրաձգու-

¹² La Résistance.

¹³ Տե՛ս <https://webaram.com/auteur-biblio/gardon-victor>, հմմտ. Ղուկ. ԺԹ. 40:

¹⁴ ՎԻԿՏՈՐ ԳԱՐԴՈՆ, Զմրուխտավառ ասպետը, «Խորհրդային գրող», Երեւան, 1990, էջ 668:

¹⁵ Տե՛ս am.hayazg.info/ Գարդոն_Վիկտոր (Մուտք գործելու ամսաթիվ՝ 9.05.2023):

թյուն էր տեղի ունենում), գերության, փախուստի, դիմադրության՝ Ազատագրության ու դրա շարունակության միջոցով... շարունակություն, որ դեռ խաղաղություն չէ...»¹⁶:

Վեպի գլխավոր հերոսը պատանի Վահրամն է, որը մեծանում էր վանեցու ավանդական գերդաստանում, չքնաղ պարտեզով մեծ ու հարմարավետ տանը՝ շրջապատված սիրելի ու հարազատ մարդկանցով, տատի՝ Մեծ մամի իմաստուն խրատների ու հոգածության ներքո:

Բայց երանելի վիճակը երկար չի տևում:

Վահրամի առաջին առերեսումը թուրքի վայրագությանը տեղի է ունենում իրենց իսկ այգում, երբ Սադըք բեյն սպանում է տղայի սիրած սոխակին: Եւ երբ տղան իր բողոքն է արտահայտում, թուրքը կատաղած նայում է նրան, իսկ Վահրամի տատը խրատում է թոռանը. «Եթե Աստված չուզեր, բլբուլը շունչը չէր փչի: Բացի այդ, չպետք է հարձակվել, ինչպես դու արեցիր, որեւէ թուրքի վրա: Նա կարող է զայրանալ ու սպանել քո հորը, սպանել քեզ, սպանել մեզ՝ բոլորիս: Նա հրացան ունի, իսկ մենք՝ ոչ...» (ՎԳ, 29):

Մեծ մամի զգուշավորությունն անհիմն չէր եւ հաստատվում է մի քանի օր անց, երբ հոր արհեստանոցում Վահրամը կրկին հանդիպում է սոխակ սպանողին, եւ երբ պատմությունը նորից է հիշեցվում ու սեւամորթ Սայիդ Հիլմին փորձում է արդարացնել տղայի հիմնավոր ցասումը, սոխակ սպանողը կատաղի ֆշշոցով սաստում է.

— Սայիդ Հիլմի էֆենդի, մի՛ մոռանաք, որ դուք խոսում եք մի գյա... երեխայի մասին, վերջապես մի երեխայի մասին, որը հիմիկվանից պետք է իմանա իր վիճակը.... (ՎԳ, 33):

Իսկ այդ վիճակը թուրքին հպատակվելը, նրա կամայականությունները լուռ տանելն ու կյանքի երաշխիք չունենալն էր:

Վաղ տարիքից երեխաներն արդեն զգուշանում էին թուրք տղաների հետ բախումներից: «Վահրամ, երբ թուրքեր ես նկատում, այնպես արա՛, որ նրանք քեզ չտեսնեն: Միշտ խուսափիր նրանցից»,— այս խրատն է հնչում Վահրամի ուղեղում, երբ ընկերների հետ հանդիպում է հայկական թաղամասում հայտնված թուրք տղաների, որոնք եկել էին, իրենց ասելով՝ զվարճանալու:

¹⁶ Տե՛ս ՎԻԿՏՈՐ ԳԱՐԳՈՆ, նշ. աշխ., էջ 3: Այսուհետեւ գրքի հղումները շարադրանքում՝ փակագծերում՝ (ՎԳ եւ էջը):

«Թուրքերն արագացրին իրենց ընթացքը: Նրանք վարժվել էին տեսել, որ «անհավատները» նահանջեն, երբ իրենք մոտենում են: Հենց որ նրանք մոտեցան, սկսեցին ձնագնդերով ու մբակոծել հայերի խմբին՝ լուսանքներ տեղալով քրիստոնյաների Աստծու, իրենց հակառակորդների հայրերի, մայրերի, քույրերի հասցեին, անվանելով նրանց «գլավուր», խոստանալով մի լավ ծեծել նրանց» (ՎԳ, 43):

Իսկ երբ խոստումն իրագործելու համար հանում են դաշույններն ու ծեծկռտուքի ժամանակ իրենք էլ վիրավորվում եւ հայտնվում թուրք կոմիսարի գրասենյակում, ի զարմանս Վահրամի, թուրք տղան եւս մտրակի հաված է ստանում, բայց ոչ թե ծեծկռտուք հրահրելու, այլ ծեծվելու համար:

— Շունշանորդի՛,— ասաց նրան կոմիսարը՝ խարազանով կրկին սպառնալով:— Ձե՛ս ամաչում, որ գլավուրի մեկը խլի քեզնից քո խանչալը (ՎԳ, 45):

Թուրքական խորամանկ ու հայաջինջ քաղաքականությունը գործում էր բոլոր մակարդակներում: Վանում նրանք բնակվում էին այնպես, որ հայկական տները շրջափակված լինեին ու սկսում էին նեղել հայերին՝ խլելով նրանց ունեցվածքը, փախցնելով գեղեցիկ աղջիկներին, պարտք վերցնելով ու երբեք չվերադարձնելով¹⁷:

Նման վիճակում էր հայտնվել Վահրամի մորաքրոջ՝ գեղեցկուհի Ալմաստի ընտանիքը, որի հիվանդ ամուսինը՝ Թովմասը, աղջկան՝ Սիրարփին թուրքերից թաքցնելու հոգսից նեղն ընկած, ցասումնալի բացականչում է.

Կհամարձակվեն: Ո՛վ կարող է արգելել նրանց անելու այն, ինչ հաճո է իրենց: Նրանք խլեցին իմ մեծ տունը՝ թողնելով ինձ այս խարխուլ խրճիթը: Խլեցին իմ այգու երկու երրորդը, ուզածի չափ քամեցին մեզ, հիմա էլ ուզում են աղջկանս փախցնել: Մենք պատկանում ենք նրանց, անպաշտպան մարդիկ ենք: Հաճախ հարցնում եմ ինքս ինձ՝ որեւէ օգուտ կտա՞ նրան թաքցնելը... Իսկ դրա հետեւանքները: Մի՞թե մեզ հանգիստ կթողնեն (ՎԳ, 38):

Հեղինակը հեզնանքով է խոսում թուրքերի «բարեկամության» մասին. «Տարիներ ի վեր ապրելով հայերի կողքին՝ թուրքերը միշտ մի բանի

¹⁷ Այս քաղաքականությունը հետագայում կիրառում են Ադրբեջանի իշխանությունները Հայաստանի հանդեպ՝ ձեւավորելով անկլավներ ու ժամանակի ընթացքում դրանք «կուլ տալով»:

կարիք ունենում էին՝ ալյուրի, հացի, պանրի, ձվի, մսի, աղացած ձկան, բանջարեղենի, մրգի, անձեռոցիկի, ափսեների... Այն բոլորի արժեքը, ինչ փոխ էին տարել նրանք՝ առանց երբեւէ վերադարձնելու, մի խոշոր գումար կկազմեր: Թողմասը վարձու էր տվել նրանց իր տունը, հոգ էր տանում եւ կատարում էր բոլոր անհրաժեշտ նորոգումները տասը տարուց ի վեր, ու երբեք վարձագին չէր ստացել: Ահա այս գնով էլ նրանք բարեկամ էին, շատ սերտ բարեկամ» (ՎԳ, 123—124):

Նման «բարեկամներից» մեկն էլ հարեւան Շյուքրի բեյն էր, որ առաջարկել էր կնուծյան առնել Թողմասի մանկահասակ աղջկան՝ Սիրարփիին, բայց, տեսնելով աղջկա մորը, հիմա էլ նրան էր ցանկանում: Իսկ հարեւան թրքուհիները գործը գլուխ բերելու համար խրատում են Ալմաստին.

— Դուք կին եք եւ կարող եք վայրկենապես մահմեդական դառնալ՝ կադիի հետ ընդունելով սրբազան բանաձեւը.... Այնժամ անմիջապես ձեր ամբողջ անցյալը՝ ամուսնությունը, ամուսինը, երեխաները, այդ ամենը այլեւս հաշվի չի առնվի (ՎԳ, 106):

Իրենց ուզածը չստանալով՝ թուրքերն ու քրդերը կոտորում էին հայերին, առեւանգում կանանց ու աղջիկներին, հրդեհում տներն ու այգիները:

Ու ամեն անգամ, երբ տեղային կոտորածեր էին լինում, հայերն այն որակում էին «Դեպք» եւ զգուշանում թուրքերին գրգռելուց:

«Դարեր ի վեր տասնհինգ-քսան տարին մեկ, իշխանությունները լռեցյալն համաձայնություն էին տալիս կրքերի պողծկումին: Այդ ժամանակ թուրքերը քաղաքներում ավարտում էին հայկական մնացած այն տների յուրացումը, որոնք նախորդ հափշտակությունների հետեւանքով կղզիացած էին թուրքական թաղամասերում: Երկրում ամենուրեք կողոպուտները հարստացնում էին թուրքերին, որոնք փայփայում էին ժամանակի ընթացքում հաստատված ու սաստկացած այդ ցանկությունը: Նրանք կարող էին ազատություն տալ իրենց բնազդներին: Նույն առիթով էլ առեւանգում էին իրենց դուր եկած կանանց ու երեխաներին: Բնակչության վիճակագրության տեսակետից այդ պարբերական արյունահեղությունները նվազեցնում էին գյավուրների թիվը, ավելացնում թուրքերի քանակը եւ մանավանդ թարմացնում նրանց արյունը: Նրանք արդեն կորցրել էին իրենց սկզբնական ցեղայինը՝ մոնղոլական հատկանիշները ու ձեռք բերել սպիտակ մարդկանց տեսք: Սակայն մոն-

ղղլական հոգին՝ որսկան թռչնի հոգի, ոչինչ չէր կորցրել իր վայրագությունից» (ՎԳ, 125):

Եւ թովմասի հարեւանները երախտագիտության փոխարեն հոշոտում են նրան, կնոջը եւ երեք մանկահասակ դուստրերին:

Վահրամի պապի՝ Նազիկ անունով սեւ նժույգին տիրանալու համար թուրք Շեւքեթ բեյը երրորդ փորձից սպանում է պապին եւ առեւանգում նժույգը:

Իշխանություններն աչք էին փակում կոտորածների ու կողոպուտի վրա, իսկ հայերն ավելի զգուշավոր էին դառնում:

Հաճախ էին խուզարկվում հայերի տները եւ որտեղ զենք էին հայտնաբերում, տան տղամարդկանց դատապարտում էին մահվան, իսկ երբ շատախցի Կարոյի տանը զենքը բացահայտ սեղանին դրված են տեսնում եւ լսում Կարոյի բացատրությունը, թե սուլթան Աբդուլ Համիդն էլ գիտի, որ ինքը զենք ունի եւ չի թաքցնում, ավելին, ցուցադրում է իր զինանոցը՝ երկու հրացան, թուրք չաուշը ապշում է:

— Ալլահ, ալլահ.... Ես երբեք չէի հավատա, որ գյավուրի մեկը ամբարտաճանություն կունենա անպատկառորեն ցուցադրելու մի ամբողջ զինանոց եւ խոսելու այսպիսի հանդգնությամբ (ՎԳ, 155):

Կարոյին տանում են Սելիմ բեյի մոտ, որն, իբր Կարոյի անվտանգությունից ելնելով, որպես վաղեմի ծանոթ պահում է նրան իր մոտ, բայց, ըստ էության, ձերբակալում է նրան:

Քիչ-քիչ վանեցիկներին իրավունքները սահմանափակվում են. երեկոյան նրանք այլեւս իրավունք չունենին տնից դուրս գալու, հակառակ դեպքում սպանվում էին: Յերեկներն էլ անվտանգ չէին, չնչին ու հորինված պատճառներով թուրքերը ծեծելով սպանում էին հայերին:

Թուրքին քաջ ճանաչող Մեծ մամը զավակներին խրատում է. «Ամբողջ աշխարհում ոչ ոք չի կարող լինել այնքան քաղաքավարի, այնպես սիրալիր ու բարեհամբույր, ինչպես թուրքը: Բայց մի ընդհանուր հետո նա կարող է հոշոտել քեզ....: Պետք է միշտ էլ զգուշանալ նրանց» (ՎԳ, 179):

Աբդուլ Համիդի գահընկեցությունը թվացյալ ազատության հույս է ներշնչում հայերին, բայց, ավաղ, երիտթուրքերն ավելի վատթար ու խորամանկ էին:

Երբ հեղափոխության թմրեցնող շնչի տակ թվում էր՝ հայն ու թուրքը կարող են եղբայրանալ, միայն այն մարդիկ (հիմնականում կանայք) չէին կորցնում զգոնությունը եւ զգվանքով էին նայում բարեկամաբար

գրկախառնվող հայերին ու թուրքերին, որոնց հարազատներին թուրքերը կոտորել էին:

Երբ պարզամիտ երեխա Վահրամը, հմայված զինվորական հագուստով ու զենքերով, հայտարարում է, որ ուզում է գեներալ դառնալ, իսկ մեծերը, այդ թվում եւ թուրք սպաները, ծիծաղելով հավանություն են տալիս, նրա մորաքրոջ աղջիկը՝ Սիրարփին, որի ամբողջ ընտանիքը թուրքերը կոտորել էին, զայրացած հարձակվում է Վահրամի վրա.

— Եթե դու դառնաս թուրքական գեներալ, ես քո աչքերը կհանեմ (ՎԳ, 222):

Միամիտ հայ տղամարդկանց թվում էր, թե թուրքը կարող է փոխվել եւ իրենք վերջապես ազատ շունչ կքաշեն ու սկսում են թուրքերին հրավիրել իրենց տները, ինչին ընդդիմանում է Մեծ մամը՝ զայրացած պատվիրելով. «... Այո՛, փողոցներում, դաշտերում կամ սարում, բայց ոչ այստեղ: Այստեղ ես թուրք չեմ ուզում: Ամեն մեկն իր տեղը: Ազատության այս պատմությունը սատանայի հնարանքն է» (ՎԳ, անդ):

Ապա խրատում է իր զավակներին. «Այն, ինչ ասում կամ գրում են մարդիկ, կարեւորություն չունի: Կարեւոր է միայն այն, ինչ կա նրանց սրտերում: Արդ, թուրքական կառավարությունների սիրտը չի փոխվի: Դու, Հարություն (վեպի գլխավոր հերոս Վահրամի հայրն է, Մեծ մամի որդին.՝ Լ. Ս.), ղեկավար մարդ ես ու պիտի գնաս Կոստանդնուպոլիս՝ հանդիպելու թուրք բարձրաստիճան մարդկանց հետ: Չհավատաս դրանց ասածներին: Անկարելի է, որ մեկ օրից մյուսը՝ թուրքը լավանա ու ընդունի ազատությունը, հավասարությունն ու եղբայրությունը...»

....Գնա Կոստանդնուպոլիս, որդյակ իմ, իմ աղոթքների ուղեկցությամբ: Բայց ոչ մի բանի մի՛ հավատա, ոչինչ մի՛ խոստանա, բերանդ քիչ բաց եւ եթե հնարավոր է՝ ամենեւին: Եւ ընդհակառակը՝ լա՛յն բաց արա աչքերդ ու ականջներդ եւ մանավանդ խորաթափանցությունդ մի՛ կորցրու: Եղի՛ր աշալուրջ, զննիր եւ մտածիր: Արդ երիտ. թուրքերը նման են նորելուկ հարուստների: Աչքածակ են, անկուշտ: Շատ արյուն ու թշվառություն է պետք, մինչեւ որ կշտանան դրանք: Սուլթաններն ու նրանց մերձավորները վաղուց են կշտացել» (ՎԳ, 224):

Ապա շարունակում է. «...Ձավակներս, տեսնում եմ, որ պատրաստ եք հավատ ընծայել թուրքերի ժպիտներին եւ մոռանում եք, որ ձեր հայրերին, ձեր պապերին նրանք են խողխողել... Անկասկած ձեզ ցո՛ւյց տվեք հլու, բայց երբեք աշալրջությունը մի՛ կորցրեք: Ո՛չ ձեր բնակարանները,

ո՛չ էլ ձեր սրտերը մի՛ բանաք թուրքերի առաջ: Նրանք կվառեն ձեր տները եւ կխոցեն ձեր սրտերը առավել եւս հեշտ, որքան ավելի լավ ճանաչեն դրանք» (ՎԳ, 224):

Մեծ մամի ու որդու՝ Հարությունի երկխոսությունը բացահայտում է, թե որքան սթափ, զգոն ու խորաթափանց է հայ կնոջ, հատկապես տարիքն առած ու հմաստնացած մամի միտքը:

— Բայց, մայր,— ասաց Հարությունը,— այլեւս թուրք չկա: Բոլորս էլ օսմանցի ենք, հիմա ամենքս էլ հավասար ենք:

Մեծ մամը մի քանի անգամ խաչ հանեց երեսին:

— Հիսո՛ւս, Մարիա՛մ, հրեշտակապետներ ու սրբեր, պարգեւեք մեզ ձեր ողորմությունը: Ուրեմն դուք կարծում եք, թե թուրքը այլեւս թուրք չէ, այլ օսմանցի, որ հայը այլեւս հայ չէ, այլ օսմանցի: Նույնը եւ հույնի, ասորու, հրեայի, արաբի կամ քրդի համար... Բայց, Հարություն, ասա ինձ, ի՞նչ է օսմանցին, մոռնումանը կամ քրիստոնյան:

— Թուրքը մնում է մոռնուման, իսկ հայը՝ քրիստոնյա: Ամեն ոք ազատ է պահելու իր կրոնական համոզմունքները:

— Ուրեմն ոչինչ չի փոխվել: Օսմանցի հորջորջումը կփոխի՞ արդյոք թուրքերի կամ քրդերի սիրտը, կդադարեն նրանք թալանել, հրկիզել ու մորթոտել:

— Մայր, դու շատ լավ գիտես, որ եթե մենք ազատվեցինք կոտորածից, ապա երիտ. թուրքերը թույլ չտվին:

— Այո՛, իհարկե: Մի անգամ միայն թուրքերը մասնատված լինելով՝ իրենց ուժեղ չէին զգում: Բայց շատ չանցած գառան մորթին, որ այժմ ծածկում է նրանց, երեւան կհանի գայլին:

— Ո՛չ, մայր, չափազանցում ես,— ասաց Տիգրանը (Հարությունի եղբայրն է, Մեծ մամի որդիներից մեկը.— Լ. Ս.) մեղմությամբ: Սրանից հետո օրենքներն արձակելու է պառլամենտը: Եւ այդ ժողովի դահլիճում կնստեն նաեւ հայ պատգամավորները: Ավելին, բանակում կլինեն նաեւ հայ զինվորներ...

— Ձայնդ կտրիր, անխելք,— ասաց Մեծ մամը վեհաշուք շեշտով,— այդ ամենը երբեք չի փոխի սրտերը: Իմաստության արոտների դարեր են պետք՝ սրտերը փոխելու համար (ՎԳ, 225):

Մեծ մամի սթափության ու զգոնության խրատներն արդիական են, ուղղորդող, ուստի հարկ ենք համարում մեջբերել՝ մերօրյա ընթերցողին հասանելի դարձնելու եւ արթնացնելու ակնկալիքով:

— Զավակներս,— շարունակեց Մեծ մամը,— եթե դուք ծառայություն մատուցեք վագրին, նա երախտապարտ կլինի ձեզ եւ երբեք չի մոռանա դա: Բայց թուրքը կմոռանա: Դարերից ի վեր նրա սիրտը թունավորված է: Նա պարտ ու պատշաճ է համարում այն ծառայությունները, որ մատուցում ենք իրեն: Ինչպե՞ս եք ուզում, որ թուրքերը հարգեն մեզ, երբ նրանք Ղուրանն անգամ չեն հարգում:....Հավասարության մասին խոսք չի կարող լինել: Այդ բառը չկա անգամ թուրք լեզվի մեջ. «մոռսավաթ» չի նշանակում «հավասարություն», այլ արդարություն:

....Թուրքերը միայն մի բան են հարգում՝ ուժը: Իսկ նրանք մեզնից ուժեղ են:Ինչպես եք համարձակվում դուք հավատալ, թե նրանց եղբայրներն եք:

— Բայց եւ այնպես հավասարությունը արձանագրված է հիմնական օրենքի մեջ, մայր,— ասաց Հարությունը:

—....Եթե օրենքը քեզ ստիպում է ապավինել գայլին եւ եղբայրաբար վարվել նրա հետ, նա ձեզ կուտի (ՎԳ, 225—226):

Ազատության բերկրությանն անմիջապես փոխարինելու եկավ Ադանայի ջարդը եւ թուրքերի կազմակերպած ծեծը, որ Վահրամի դեմ էր:

Ազատություն, հավասարություն, եղբայրություն հռչակելուց մի քանի ամիս անց գազազած թուրք ամբոխը 30 000 հայի կոտորեց Ադանա քաղաքում (Կիլիկիա) (ՎԳ, 232):

Այդ ամենից հետո Հարությունը խոստովանում է.

— Դու իրավացի էիր, մայր: Խոսքով հիմա ազատություն է, հավասարություն ու եղբայրություն, բայց թուրքերը թվում են անուղղելի: Հարկերն անընդհատ ավելանում են, մեր երիտասարդներին տանում են զինվորական ծառայության՝ գանձելով հանդերձ փրկագինը որպես հարկ: Այո՛, խոսքով բոլորս էլ օսմանցի ենք, պատգամավորներ ունենք, բայց անկեղծությամբ կասեմ քեզ, մայր, ինձ թվում է, թե էնվերը, Թալեաթը, Զեմալը եւ այլք, որ հիմա փաշա են արդեն, պատրաստվում են սուլթաններ դառնալ: Դրանցից յուրաքանչյուրը տասնապատիկ ավելի ահարկու է, քան միակ սուլթանը, որ գոյություն ունեւ դրանց վերելքից առաջ (ՎԳ, 236—237):

Արմենական կուսակցության՝ Կոստանդնուպոլսում կայացած ժողովին մասնակցելուց հետո Հարությունը համաքաղաքացիներին է փոխանցում նրանց հայացքները. «Թուրքիայի մեծությունն ստեղծելու համար բնականաբար պետք կլինի մի հզոր բանակ, ուրեմն եւ՝

մեծ գումարներ, եւ հարկերն այլեւս սահման չեն ճանաչելու: Մի՞թե պետք չէ, որ «մենք» մեզ զոհաբերենք, որպեսզի նվաճենք Բաքուն ու նրա նավթը, Պարսկաստանը, Աֆղանստանը, Բելուջստանը, Թուրքեստանը, Տաջիկստանը, Կիրգիզիան, Մոնղոլիան, հասնենք Չինաստան եւ մեր մայրաքաղաքը հաստատենք Սամարղանդում... (ՎԳ, 313—314):

...Հենց մենք՝ խոնարհ ժողովուրդներս՝ հայերը, հույները, արաբները, հրեաներն ու ասորիները պետք է գլուխ բերենք այդ բոլոր նվաճումները, վճարենք բանակի ծախքերը, սպառազինությունն ու... հատուցենք վնասները: Երկիրն ընդարձակելուց հետո մենք երջանիկ կլինենք... որովհետեւ, ասում են մեզ, բոլոր ազգերն էլ կհարգեն նրան եւ մեր բոլորի երջանկությունը կծնվի այդ ակնածանքից» (ՎԳ, 314):

Սա Մեծ Թուրանի գաղափարն էր, որ պիտի իրագործվեր հպատակ ժողովուրդների ձեռքով, ինչպես այժմ էլ շարունակում է օրակարգում մնալ եւ իրագործվել արդեն արդիականացված ձեռով՝ վարձկանների միջոցով:

Հարությունը փորձում է ուշքի բերել հայ պարագլուխներին, բայց նրան իբրեւ գեղջուկ են ընդունում:

Թուրքի խորամանկությունն էնվերի բերանով համոզում է Հարությունին. «Մենք՝ այստեղի մարդիկս (նկատի ունի պոլսեցիներին.— Լ. Ս.) ոչինչ ենք: Երկրի ուժը դուք եք, որ ապրում եք հողի վրա: Բայց եթե օսմանյան ազգը մի օր իր ծոցն առնի աշխարհի բոլոր թուրանյան ժողովուրդներին, մենք կդառնանք մեծ ազգ, իսկ դուք՝ մեր մշտական հայրենակիցները, մեծ դեր կունենաք կատարելու:

...Վանեցիները բնածին զինվորներ են, իսկական առյուծներ: Եթե նրանք հասկանան կատարյալ օսմանցու իրենց դերը, ապա հրաշքներ կգործեն վաղվա մեր մեծ հայրենիքի ստեղծման գործում» (ՎԳ, 3115):

Իսկ Թալեաթի հետ հանդիպման ժամանակ տեղում են միայն հարցեր. «Վանեցիները կկռվեն արդյոք պատերազմի դեպքում Պարսկաստանի կամ Ռուսաստանի դեմ: Զենք ունենք մենք: Խնչ կարծիք ունեմ ես կուսակալ Թահսին բեյի մասին: Ապագայի ծրագրեր ունենք արդյոք: Երբ ես խոսեցի, թե ցանկանում ենք տրամվայի գիծ գցել Վանում, նա խիստ զարմացավ: Վանի թուրքերի համաձայնությունն ստացել ենք արդյոք այդ հարցում: Ապրո՞ւմ ենք նրանց հետ որպես լավ դրացիներ: Մեր քաղաքից մարդիկ գնո՞ւմ են արդյոք...» (ՎԳ, 316):

Այս բոլոր հարցերը հուշում են թուրքերի հեռագնա նպատակների մասին եւ ցույց տալիս «բարեկամ» հայերի հանդեպ իրական վերաբերմունքը:

Բայց Հարությունին առավել մեծ մտահոգություն են պատճառում Կ. Պոլսում հանդիպած այն «վանեցի հատուկենտ հայերը, որոնք իրենց մտածելակերպով ավելի մոտ են փաշաներին, քան մեզ» (ՎԳ, 317):

Խորը անհանգստություն են պատճառում հատկապես դաշնակցական երկու ղեկավարներ՝ Շեհրիկյանը եւ Ակնունին, որոնք «հավատարիմ լինելով երիտասարդ թուրքերին..., մատուցում էին նրանց իրենց բարեկամությունն ու վստահությունը, առանց որեւէ պայմանի: Մենք գիտենք, որ դաշնակները մշտապես աջակցել են երիտասարդ թուրքերին եւ դեռ օգնում են նրանց: Իրականում նրանք գնված են թուրքերի կողմից եւ հաստատապես հավատում են եղբայրական համագործակցության գաղափարին» (ՎԳ, 317):

Խոսելով սուլթանի եւ երիտթուրքերի մասին՝ Հարությունը կարծիք է հայտնում, որ սուլթանը հաշվի էր առնում Ղուրանի օրենքները եւ 300 միլիոն մահմեդականներից 30 միլիոնն էին միայն նրա իշխանության տակ: Բոլոր մուսուլմանների կրոնապետը խալիֆն էր, «մինչդեռ այդ երիտասարդ թուրքերը ոչ մի բանից չեն վախենում, երեւակայում են, թե ուղարկված են երկնքից, որպեսզի նվաճեն եւ իրենց ենթարկեն ամբողջ մահմեդական աշխարհը, հետո էլ, ինչո՞ւ չէ, ամբողջ աշխարհը: Սրանք Զինգիզ խանի, Լենկթեմուրի, Աթիլայի հաջորդներն են:

Հետեւաբար ավելի, քան երբեւէ, մենք պետք է շրջահայաց լինենք: Ես հավատացած եմ, որ առաջին իսկ հնարավորության դեպքում երիտասարդ թուրքերը կբնաջնջեն մեզ: Սրանք չեն վարվի սուլթանի պես, որ մաս-մաս էր կոտորում՝ տասնհինգ-քսան տարին մեկ, որպեսզի ավարը ընձեռնի թուրքերին եւ արգելակի մեր ազգի աճը: Նրանք կբնաջնջեն մեզ ծծկերից մինչեւ հարյուրամյա ծերունին: Մենք միայն մեզ վրա կարող ենք հույս դնել» (ՎԳ, 318):

Ցավ ի սիրտ պետք է նշել, որ Հարությունի մտավախությունն ավելի քան իրական հիմքեր ուներ. կարճ ժամանակ անց երիտթուրքերի դիվային ծրագրերն ի գործ են դրվում՝ ջնջելով հայության հետքերը հազարամյակների պատմություն ունեցող Հայոց երկրից: Այդ քաղաքականությունը Հարունակվում է առայսօր:

Սույն հոդվածի շրջանակներում սահմանափակվենք այսքանով: Հաջորդիվ ծավալվող դեպքերը կներկայացնենք մեկ այլ հոդվածով՝ ամբողջ-

ջացնելով հրաշալի մի գրողի՝ Վահրամ Կաքավյանի՝ բնիկ վանեցու ու սականատեսի հոյակապ վեպի, հայերի ու թուրքերի հարաբերությունների եւ գիշատիչ թուրքերի էություն ներկայացումը:

ԼԻԱՆԱ ՍԱՆԹՐՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ, ՇՏՀ

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Վիկտոր Գարդոն, Վահրամ Կաքավյան, «Զմրուխտավառ ասպետը», Վահի ինքնապաշտպանություն, երիտթուրքեր, Արմենական կուսակցություն, Մեծ Թուրան, հայկական ջարդեր, Եդեռն:

РЕЗЮМЕ

В статье анализируется роман «Изумрудный рыцарь» Виктора Гардона (Ваграма Какавяна), французского писателя армянского происхождения. На основе произведения рассматриваются эпизоды, раскрывающие антиармянскую, захватническую и геноцидальную политику турок, формирующие их образ как коварного и жестокого противника. В противовес этому армянские персонажи представлены как трудолюбивые, миролюбивые и подчас доверчивые, тогда как внешне приветливый, но по сути хищный и беспощадный облик турка служит выразительным художественным контрастом.

SUMMARY

The article analyzes the novel “Emerald Knight” by Victor Gardon (Vahram Kakavian), a French writer of Armenian descent. Based on the work, the study examines episodes that reveal the anti-Armenian, expansionist, and genocidal policies of the Turks, shaping their image as a cunning and cruel enemy. In contrast, the Armenian characters are portrayed as hardworking, peace-loving, and sometimes trusting, while the outwardly friendly but essentially predatory and ruthless image of the Turks serves as a striking artistic contrast.

